Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2024. «Վանաձորում հյուրընկալության և սպասարկման մասնագիտական կենտրոնի հիմնման ծրագրի ստորագրման արարողություն»

Երևան՝ 1 հոկտեմբերի, 2024թ

2024 թվականի հոկտեմբերի 1-ին Վանաձոր համայնքում տեղի ունեցավ Հյուրընկալության և սպասարկման մասնագիտական կենտրոնի հիմնադրման ծրագրի դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը (Մինչև 102,957 ԱՄՆ դոլար) :

Դրամաշնորհի պայմանագիրը կնքվել է Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն ԱՕԿԻ Յուտակայի և «ՀԿ Կենտրոն» Քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի տնօրեն Արփինե Հակոբյանի միջև: Արարողությանը ներկա էին նաև Լոռու մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյանը, ինչպես նաև ՏԻՄ ներկայացուցիչներ և ծրագրի շահագրգիռ կողմեր:

Այս ծրագրի նպատակն է Լոռու մարզի Վանաձոր համայնքում ստեղծել հյուրընկալության և սպասարկման ոլորտների մասնագիտական ուսուցման կենտրոն՝ կառուցելով 528 քմ ընդհանուր մակերեսով եռահարկ շենք: Ծրագրի արդյունքում տարեկան մոտ 100 մարդ, ներառյալ տեղի բնակիչները և տեղահանվածներ Լեռնային Ղարաբաղից, կստանան մասնագիտական ուսուցում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են խոհարարությունը, հյուրընկալությունը և ծառայության հետ կապված այլ հմտություններ: Սա կօգնի լուծել զբոսաշրջության ոլորտում հմուտ աշխատողների պակասը՝ խթանելով զբաղվածության հնարավորությունները և նպաստելով տարածաշրջանի կայուն տնտեսական աճին:



Դեսպան Առկին և ՀԿ Կենտրոնի նախագահ Ա.Հակոբյանը ստորագրեցին դրամաշնորհի պայմանագիրը

Դեսպան Առկին և ՀԿ Կենտրոնի նախագահ Արփինե Հակոբյանը

Հիշատակի լուսանկար
ՀԿ կենտրոնի աշխատակիցների հետ

Կենտրոնի պլանավորված նախագիծը